

նուրդը, որ ահա իւր յարգը կը պահէ դարերու շրջանին մէջ:

Բաց ի խաղողոյ գինիէն՝ նախնեաց թարգմանութիւնք կ'աւանդեն մեզ օղի կամ ցրի ըսուած ըմպելին, հոմանիշ յն. σίκεραին (Ղ. 4. Ա, 15. Ղեւտ. Ժ, 9 եւն), որ կը շինուէր կիտրոնէ եւ ուրիշ նիւթերէ: Զոր օրինակ մարգարէն ըստ Ոսկերերանի՝ «ցըր՝ որ յամբրաւոյն (արմաւ) առնէին եւ ի պէտս գինւոյ փոխէին՝ զայն կոչէ» (Ես. 53): Երկու հայեցի կոչմունք եթէ ուղղակի զայդ ցուցնեն եւ եթէ զայդպիսիս, գոնէ կը համոզեն զմեզ՝ թէ մեր քով ալ կային արուեստական ըմպելիք, թէեւ ոչ շատ յաճախեալ: Քսենոփոն արդէն կը տեսնէր ի Հայաստան նաեւ «գինի ի գարւոյ» (Բ, 94), որուն չենք հանդիպիր մեր մատենագրութեան մէջ: Մանազկերտացւոյն կանոնաց մէջ ալ կը յիշուին «օղի եւ մեղրոյի եւ աւրաւօղի» (Մնգ. Ե): Եւ վաստակաց գիրքը կ'ուսուցանէ՝ օշնդրէ, վարդէ, մկնսոխէ, հապալասէ, սերկեւէ, մեղրախառն եւ այլ գինիներ պատրաստելու արուեստը (118-23). ինչպէս նաեւ քացախագործութիւնը գինիէ եւ ուրիշ նիւթերէ (124-5):

Յ. — Կարասիք: — Մառանի մէջ գործածուածներէն ինձ ծանօթ են հետեւեալները, որոցմէ ոմանք եթէ սահմանուած